Հ. 4832

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«07» 06 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0101-23

Ձեռնարկողը՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ
Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Կարմիր Բանակի 56

Գործունեությունը՝ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի ափամերձ հատվածի թիվ 5 հանրային լողափի բարեկարգման և կառուցապատման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0101-23

<07**>** հունիսի **2023թ.**

Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի ափամերձ հատվածի թիվ 5 հանրային լողափի բարեկարգման և կառուցապատման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Հայտ/,
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Սևան համայնք, Լճաշեն բնակավայր

Ներածական մաս. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7)-րդ կետի ա. ենթակետի՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից նախատեսվող վերը նշված գործունեությունը՝ որպես քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակ դասակարգվում է «Գ» կատեգորիայի:

Գործունեության նպատակն է՝ Սևանա լճի ափամերձ հատվածում հանրային լողափի և հանգստի գոտու կազմակերպումը՝ բնակչության և զբոսաշրջիկների երկարաժամկետ և կարճաժամկետ միջսեզոնային հանգիստի համար: Նախագծով նախատեսված՝ Լճաշենի թիվ 5 հանրային լողափում հանգիստ կազմակերպելու, բարեկարգում ու սպասարկում իրականացնելու նպատակով կառուցապատող Իլոնա Հարությունյանին՝ մրցույթային հանձնաժողովի կողմից վարձակալության իրավունքով, 7 տարի ժամկետով տրամադրել է 13700մ^2 մակերեսով տարածք՝ գործունեությունն իրականացնելու համար: Հողամասի նպատակային նշանակությունը բնության հատուկ պահպանվող տարածքների է՝ նախատեսված ռեկրեացիայի նպատակով:

Նկարագրական մաս. Հանրային լողափի կառուցապատման համար նախատեսվող տարածքը գտնվում է Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի վարչական սահմաններում, Սևան-Գավառ ավտոմայրուղուց դեպի լիճն ընկած ափամերձ հատվածում, զբաղեցնում է 1,37 հա մակերես: Տարածքի մուտքն ապահովվում է Սևան-Երևան Մ-14 ավտոմայրուղուց՝ գոյություն ունեցող երկրորդական ճանապարհով: Տարածքը տեղակայված է «Սևան» ազգային պարկ»-ի ռեկրացիոն գոտու «Լճաշեն» տարածքային հատվածում և հարակից է ափամերձ այլ հանգստյան գոտիների: Տարածքում առկա քանդման ենթակա շարժական շինությունները կապամոնտաժվեն «Սևան» ԱՊ-ի հետ համաձայնեցված: «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ

օրենսդրությամբ սահմանված կարգով տարածքում իրականացվել են անտառաշերտի մաքրման աշխատանքներ /չիչխանի մացառներից և մանր թփերից/: Դիտարկվող արածքում առկա 85 հատ սոճիները կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանվելու են:

Հանրային լողափի բարեկարգման և կառուցապատման տարածքը՝ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի 177-Ն որոշման, գտնվում է Սևանա լճի ջրհավաք ավազանի կենտրոնական գոտու 1-ին ենթագոտում: Լճաշենի թիվ 5 հանրային լողափի կազմակերպումն իրականացվելու է համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի N1563-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան: Լողափնյա գոտին կազմակերպվելու է 1905 նիշից ներքև ընկած հատվածումՆախագծով նախատեսվում է մեկ հարկանի շարժական, ոչ հիմնական շինությունների կառուցում: Կառուցապատվող հատվածների հատակագծային լուծումները ընտրվել են բնական միջավայրին համահունչ՝ հաշվի առնելով ափի ուրվագիծը, ռելիեֆի ուղղվածությունը, տարածքի դիրքը քամիների ուղղվածությունն ու ուժգնությունը: Տարածքի ճարտարապետական լուծումները հնարավորություն կստեղծեն, թե զբոսաշրջիկներին և թե տեղացիներին իրենց հանգիստը կազմակերպել բնության գրկում, գեղատեսիլ Սևանա լճի ափին:

Հանրային լողափի տարածքի էլեկտրամատակարարումը և ջրամատակարարումը կիրականացվեն մատոցող կազմակերպությունների հետ կնքվող տեխնիկական պայմանների և պայմանագրերի համաձայն: Ջեռուցումը նախատեսված է յուրաքանչյուր քոթեջում և շինությունում տեղադրվող անհատական էլեկտրասարքերի միջոցով: Ջրամատակարարումը կիրականացվի տարածքի հարևանությամբ անցնող՝ 20մ հեռավորության վրա գործող՝ 200 մմ տրամաչափի ջրատարին միանալով: Կենցաղային կեղտաջրերի համար նախատեսված է տեղադրել մաքրման կայան: Բակային ներքին ցանցով կեղտաջրերը կհավաքվեն տարածքի ամենացածր կետում և պոմպակայանով կտրվեն մաքրման կայան: Տարածքի աղբահեռացումը կատարվելու է համաձայն՝ Սևանի համայնքապետարանի կողմից տրված տեղեկանքի՝ պայմանագային հիմունքներով: Աղբահանության նպատակով հանրային լողափի տարածքում տեղադրվելու են սահմանված թվաքանակով աղբամաններ:

Տարածքի կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝ կառուցապատման ընդհանուր մակերես - 3151մ² (կամ 23%), կանաչապատման և բարեկարգման մակերես՝ 10549մ² (կամ 77%): Շահագործման փուլում հանգստացողների առավելագույն քանակը կկազմի 100 մարդ: Համաձայն նախագծային լուծումների՝ կառուցապատումն իրականացվելու է չորս փուլերով /մինչև 2 տարի շինարարության ժամանակահատվածով/ որոնք ներառում են.

1. Ստորգետնյա հաղորդակցությունների կազմակերպման, հետիոտն արահետների, շարժական, ոչ հիմնական շինությունների (սանհանգույց, տաղավարներ, ճամփեզրային սրճարան) կառուցման աշխատանքներ, ավտոկայանատեղիի, մանկական խաղահրապարակի, ծառատունկի կազմակերպման և բարեկագման աշխատանքներ:

2. Քոթեջների լրացուցիչ տաղավարների և հովանոցների տախտակամածերի, լողափնյա սրճարանի կազմակերպում և կառուցում, բարեկարգում, ծառերի ու թփերի տնկում:

02513163
ՇՐՋԱԿԱՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

3. Ջրում շոգեբաղնիքի կառուցում՝ փայտե տախտակամածերով, ռեստորանի, համերգասրահի կառուցում:

4. SPA-համալիրի և բաց լողավազանի կառուցում:

Կառուցվող բոլոր շինությունները և բարեկարգման ենթակա տարածքները ոչ հիմնական կառուցապատմամբ են՝ առանց ցեմենտային հիմքի: Որոշ կառույցներ գերանանման հիմքերի վրա են ամրացվելու, նպատակ ունենալով չխաթարելու գոյություն ունեցող բնական լանդշաֆտը և անհրաժեշտության դեպքում տեղափոխել կառույցները:

Տարածքում նախատեսված է տեղադրել 10 հատ քոթեջ-տնակներ՝ նախատեսված գիշերակացի համար, 531,2մ² ընդհանուր մակերեսով 10 շարժական տնակներ (մեկ, երկու, երեք սենյականոց), որոնք իրականացվելու են թեթև կոնստրուկցիաներով: Նախատեսվում է 110մ² մակերեսում սիզամարգի իրականացում: Լողափի ավազակոպճային շերտը կկազմի 1106մ²: Քոթեջները տեղադրվելու են 1905 նիշից ցածր տարածքներում:

Կառույցները տեղադրվելու են փայտյա ցցերի վրա և երեսպատվելու են փայտով, անհրաժեշտության դեպքում հնարավոր կլինի արագ ապամոնտաժել դրանք և հեռացնել տարածքից: Տարածքի մուտքը լինելու է սիզամարգով և գեոցանցային սալիկներով /271 մ²/ կազմակերպված ճանապարհով:

Ավտոկայանատեղին տեղադրվելու է գլխավոր մուտքի ձախակողմյան հատվածում, նախատեսվում է իրականացնել ավազային և մանրախճային ծածկույթի շերտերով (այն նախատեսված է 14 ավտոմեքենայի համար, զբաղեցնելու է 704մ²), միջանկյալ հատվածում օգտագործելով գեոտեքստիլ: Կայանատեղին ունի նաև հետիոտն ճանապարհներ՝ դեպի քոթեջային գոտի: Լցոնված ավազի շնորհիվ ջրահեռացումը կատարվելու է բնական եղանակով: Մանկական խաղահրապարակը նախատեսվում է իրականացնել ավազային շերտով, որը կլցվի սեղմված հիմքի վրա: Բոլոր շինություններում հակահրդեհային նպատակներով նախատեսված են տեղադրել կրակմարիչներ: Ոչ հիմնական կառույցներն իրականացվելու են հավաքովի, բարձրորակ պատրաստի նյութերից, հիմնականը ներմուծվելու է արտասահմանից:

Լողափի գոտու տարածքի կահավորման նպատակով, առավելագույն բեռնվածության համար նախատեսվում է տեղադրել 38 հատ արևային լոգանք ընդունելու համար նախատեսված նստարաններ /արևայրուքի բազմոց, հովանոց/, տենտեր (մեծ)՝ 2 հատ, 5 հանդերձարան-խցիկ, 4 զուգարան, 18 հատ աղբաման, 2 հատ խմելու ցայտաղբյուրներ, 4 հատ վաճառքի տաղավարներ, 23 հատ նստարան, 10 հատ նստելու համար դիզայներական քարեր: Լինելու են նաև՝ փայտերի վրա կառուցված տախտակամած՝ 3046,2 մ² (23 %), ավազի հիմքի վրա մանկական խաղահրապարակ - 282 մ² (2%):

Հանգստի գոտու տարածքում նախատեսվում է 10549մ2 մակերեսով կանաչապատում, որն իրականացվելու է տեղանքին բնորոշ ծառաթփուտային բուսականությամբ՝ համաձայնեցված «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ: Նախատեսվում է նաև տարածքի բարեկարգում՝ ներտարածքային ճանապարհների տեսքով: Դեպի հանգստյան գոտու տարածք մոտեցող ճանապարհը լինելու է գրունտային, իսկ հանգստյան գոտու տարածքում հետիոտն ճեմուղիները լինելու են հիմնականում սիզախոտերով կանաչապատված:

Շինարարության փուլում տարածքը կապահովվի ժամանակավոր ջրամատակարարմամբ և էլեկտրաէներգիայի մատակարարմամբ: Աշխատողների համար

տեղադրվեն ժամանակավոր տնակ, բիոզուգարան: Շինհրապարակում կնախատեսվի անիվների լվացման հարթակ: Տարածքում շինանյութերի պահեստավորում չի նախատեսվում: Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր կբերվեն ըստ անհրաժեշտության և կտեղադրվեն տակդիրների վրա: Շինհրապարակն ապահովված կլինի հակահրդեհային վահանակներով, հիդրատներով, կրակմարիչներով, և աղբամաններով: Տարածքում արդեն իսկ իրականացվել են մաքրման աշխատանքներ: Քանդման ենթակա շինությունների ընդհանուր ծավալը կկազմի 225 տոննա, ինչը կհեռացվի Սևանի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատաքների ընթացքում աշխատողների համար խմելու ջուրը բերովի է, իսկ ջրցանի և տեխնիկական նպատակով ջուրը կբերվի ըստ պահանջի՝ ջրցան մեքենաներով: Շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են ափից 63մ հեռավորության վրա տարածքում տեղադրվող բիոզուգարանից: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմքունքներով: Շինհրապարակի տարածքում նախատեսված է մեքենաների անիվների լվացում՝ սարքի միջոցով: Անիվների լվացումից առաջացած հոսքաջրերը ինքնահոս կհեռացվեն բիոզուգարան: Շինարարության փուլում շինհրապարակում առաջացող հոսքաջրերի հեռացման համար նախատեսված է տեղադրել 2մ^3 ծավալով պլաստիկ տարողություն: Տարայում հավաքված ջուրը կօգտագործվի շինարարության ընթացքում ջրցանի նպատակով, իսկ հավաքված նստվածքը (շինաղբ կամ տիղմ) ժամանակ առ ժամանակ կհեռացվի:

Հանրային լողափի շահագործման փուլում հանգստացողների համար խմելու ջուրը կմատակարարվի ջրամատակարարաման համակարգից՝ շուրջօրյա ռեժիմով: Կեղտաջրերը բակային ներքին ցանցով կհավաքվեն տարածքի ամենացածր կետում և պոմպակայանով կտրվեն մաքրման կայան: Կայանի տեղադրման համար հաշվի է առնվել կեղտաջրերի հաշվարկային ելքերը՝ (31,54մ^3/օր) հանգստյան գոտում առավելագույն հանգստացողների և աշխատողների քանակի հաշվարկով: Նախատեսված է տեղադրել ռուսական արտադրության «Եվրոլոս-200» տեսակի 1 հատ մաքրման կայան: Մաքրման կայանը տեղադրվելու է 1903,5 նիշում՝ վերգետնյա եղանակով: Մաքրման կայանը տեղադրվելու է հողի մակերևույթին և ամրացվելու է մետաղական ցանցով խարսխակապման միջոցով՝ հողին ամրացվելով մետաղական ցցերով: Ներքին և արտաքին ցանցերը մոնտաժվում են պոլիպրոպիլենե խողովակներից: Մաքրման կայանում մաքրված ջրերը կօգտագործվեն տարածքի կանաչապատ հատվածների ոռոգման նպատակով: Կայանի օդափոխման բաքում առաջացող ակտիվ տիղմը կհեռացվի համապատասխան մասնագիտական ծառայությունների կողմից (տարին 2 անգամ և կարող է օգտագործվել որպես պարարտանյութ):

Քոթեջների և մաքրման կայանի տեղադրման ժամանակ հողային աշխատանքներ չեն կատարվելու, քանի որ նախատեսվող կառույցների հիմքերը ամրացվելու են գրունտի մեջ խրված սյուների (երկաթյա ցից) վրա: Փոքրածավալ հողային աշխատանքները կկատարվեն միայն ջրամատակարարաման և ջրահեռացման ստորգետնյա խողովակների անցկացման ժամանակ: Հողային զանգվածը կարճաժամկետ կկուտակվի տարածքում՝ անմիջապես փորված խրամուղիների երկայնքով և խողովակների տեղադրումից հետո անմիջապես կօգտագործվի հետիցքի և տարածքի վերականգնման համար:

Հանգստյան գոտու կառուցապատման աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, տարածքի վերականգնում, գրունտային ճանապարհի կարգաբերում: Նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքներում կատարել կանաչապատման աշխատանքներ /ծառերի տնկում՝ տարածքին բնորոշ ծառատեսակներով/: Կանաչապատ տարածքների ոռոգումն ապահովվելու է մաքրման կայանից դուրս եկող մաքրված հոսքաջրերով կամ չբավարարման դեպքում՝ կենցաղային նպատակներով մատակարարվող ջրով:

Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով Հայտում նախատեսվել են բնապահպանական միջոցառումներ, որոնք ուղղված են՝ մթնոլորտային արտանետումների կանխարգելմանը, հողային և ջրային ռեսուրսների /Սևանա լիճ/ վրա հնարավոր վնասակար ազդեցությունների /ներառյալ՝ վտանգավոր արտահոսքեր/ կանխարգելմանը, թափոնների կառավարմանը, տարածքի կենսաբազմազանության պահպանությանը: Նախատեսվել են նաև միջոցառումներ, որոնք ուղղված են՝ շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակի նվազեցմանը, աշխատողների աշխատանքի անվտանգության ապահովմանը, արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելուն: Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են բնապահպանական կառավարման պլանում /ԲԿՊ/: ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգի իրականացում:

Պատճառաբանական մաս. Փորձաքննական գործընթացում Հայտի վերաբերյալ ստացված առաջարկություններով և դիտողություններով Հայտը լրամշակվել է համապատասխանեցնելով ՀՀ օրենսդրական պահանջներին: Հայտի վերաբերյալ քաղաքաշինության կոմիտեի կողմից ստացված կարծիքը ևս հաշվի է առնվել: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Սևան համայնքում և Լճաշեն բնակավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հանրային քննարկումների ընթացքում մասնակիցների կողմից բարձրացվել է հարց, ինչը հիմավորվել է կառուցապատվող տարածքում կառուցապատման չափորոշիչների վերաբերյալ օրենսդրական :

Գործունեության տարածքը նախկինում օգտագործվել է որպես հանգստյան գոտի՝ լողափ, նախագծով նախատեսված հանրային լողափի բարեկարգման և կառուցապատման արդիական լուծումները կնպաստեն Սևանա լճի ռեկրացիոն գոտու ներկայիս հնարավորությունների օգտագործմանը ինչը ունենալու է տարածաշրջանի համար որոշակի դրական ազդեցություն՝ խթանելով էկոտուրիզմի, զբոսաշրջության զարգացմանը՝ ներքին այցելուների և օտարերկրացի զբոսաշրջիկների ներգրավելու առումով, հետևաբար և բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը (աշխատատեղ և բնակչության եկամուտների ավելացում):

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կլինեն

ժամանակավոր բնույթ և կլինեն տեղայնացված՝ ընդգրկելով հիմնականում նախատեսվող գործունեության տեղամասը և շինարարության ժամանակահատվածը: Դրանք շինարարության ընթացքում կարող են բացառվել կամ մեղմացվել Հայտի բնապահպանական միջոցառումներ ծրագրում նախանշված մեղմացնող միջոցառումների և Մոնիթորիգի պլանում ամփոփված միջոցառումների և գործողություններ արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1, «Սևան» ազգային պարկի տարածքում լողափի բարեկարգման և կառուցապատման աշխատանքներն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել՝

- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի դրույթներով, ինչպես նաև 2010թ. հունվարի 29-ի «ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն և N72-Ն, 2014թ-ի հուլիսի 31-ի N781-Ն ՀՀ կառավարության կառավարության որոշումների պահանջներով:
- ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի «ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ N 1563-Ն որոշման 5-րդ կետի 1)-ին ենթակետի՝ արգելվում է հիմնական օբյեկտների կառուցումը (բացառությամբ սույն կետի 3-րդ ենթակետով սահմանված դեպքերի): Հանգստի և սպասարկող օբյեկտների ֆունկցիոնալ կահավորումն ու բարեկարգումն իրականացնել միայն ոչ հիմնական շինություններով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:
- ՀՀ կառավարության 2015 թվականի 19 մարտի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 596-Ն որոշման Հավելված 1-ի 16-դ կետի պահանջներով:
- N 5 հանրային լողափի բարեկարգման, կահավորման և սպասարկման 2022/01 պայմանագրի 2.4.16 կետի դրույթներով:

2. Լողափի գոտու տարածքի կահավորման և սարքավորումների տեղադրման տեխնիկական լուծումներն իրականացնել, առաջնորդվելով՝ ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի N 1563-Ն որոշման Հավելված N 2-ի պահանջներով:

3. Կանաչապատման աշխատանքներն իրականացնել «Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ համաձայնեցված՝ կանաչապատման նախագծին համապատասխան:

4. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

5. Տարածքի ինժեներական միացումներն /էլեկտրամատակարարում, ջրամատակարարում/ իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մատուցող կազմակերպությունների կողմից տրված տեխնիկական պայմաններին համապատասխան:

6. Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի /ներառյալ՝ մարդուն կցված

օդափոխման խցում կուտակվող տիղմ/ հեռացումն ու տեղադրումը անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Սևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից նախատեսվող Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի ափամերձ հատվածի թիվ 5 հանրային լողափի բարեկարգման և կառուցապատման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ Հերիքնազ Մկրտչյան